## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
## 22.06.2026 թվականին կնքված N ՀԱԳ-ԳՀԱՊՁԲ-26/5-1 գնման պայմանագրի

ք. Երևան «06» հուլիսի 2026թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Ա. Չուլյանի, որը գործում է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ԲՈՒԿԻՆԻՍՏ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Խ. Վարդանյանի, որը գործում է «ԲՈՒԿԻՆԻՍՏ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Վաճառող) մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 22.06.2026թ.-ին կնքված N ՀԱԳ-ԳՀԱՊՁԲ-26/5-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.6 կետերը և Վաճառողի կողմից 03.07.2026թ.-ին Գնորդին ներկայացրած ապրանքի մատակարարման ժամկետը երկարաձգելու մասին գրությունը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Գնման ենթակա ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգել և սահմանել մինչև սույն թվականի հուլիսի 17-ը:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
2.2 Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:
2.3 Սույն համաձայնագիրը կազմված 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ԳՆՈՐԴ**
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՊՈԱԿ
ՀՀ, ք. Երևան, Տերյան փող. 72
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001538
ՀՎՀՀ 01506092
Տնօրեն՝ Ա. Չուլյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
«ԲՈՒԿԻՆԻՍՏ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի 20
«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1150000443760200
ՀՎՀՀ՝ 02517432
Տնօրեն՝ Խ. Վարդանյան

/ստորագրություն/
Կ.Տ